ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՍՏԱՆԸ ՆԿ-ՈՒՄ
SPECIAL TOPIC: JUDGMENT IN THE NT

Աստծո դատաստանը հաստատ է (տես՝ Մատթ. 12:36, Եբր. 9:27, 10:27, 2 Պետ. 2:4,9, 3:7):

Ա. Միակը, որ կարող է դատել (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐԸ, ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՍԱՅԻ ԳՐՔՈՒՄ)
1. Աստված է (տես՝ Հռոմ. 2:2-3, 14:10,12, 1 Պետ. 1:17, 2:23, Հայտն. 20:11-15)
2. Քրիստոսն է (տես՝ Հովհ. 9:39, Մատթ. 16:27, 25:31-46, Գործք 10:42, 17:31,2 Կորնթ. 5:10, 2 Տիմ. 4:1)
3. Հայրն է Որդու միջոցով (տես՝ Հովհ. 5:22-27, Գործք 17:31, Հռոմ. 2:16)

Բ. Դատաստանը տհաճ, սակայն Աստվածաշնչում պարբերաբար կրկնվող թեմա է: Այն հիմնված է աստվածաշնչյան մի քանի հիմքերի վրա:
1. Սա բարոյական տիեզերք է՝ արարված բարոյական Աստծո կողմից (հնձում ենք այն, ինչ ցանում ենք, տես՝ Գաղ. 6:7)
2. Մարդկությունը անկում է ապրել. մենք ապստամբել ենք
3. Սա այն աշխարհը չէ, որն Աստված էր մտադիր ունենալ
4. Բոլոր գիտակից արարածները (հրեշտակներն ու մարդիկ) կյանքի պարգևի համար իրենց Արարչին հաշվետու են լինելու: Մենք տնտեսներ ենք:
5. Հավիտենությունը մշտապես որոշվելու է մեր գործողություններով և որոշումներով, որոնք կայացնում ենք այս կյանքում:

Գ. Պետք է արդյո՞ք Քրիստոնյաները իրար դատեն: Այս խնդրին կարելի է երկու կերպ անդրադառնալ՝
1. հավատացյալներին հորդորվում է չդատել միմյանց (տես՝ Մատթ. 7:1-5, Ղուկ. 6:37,42, Հռոմ. 2:1-11, Հակ. 4:11-12)
2. հավատացյալներին հորդորվում է գնահատել առաջնորդներին (տես՝ Մատթ. 7:6,15-16, 1 Կորնթ. 14:29, 1 Թեսաղ. 5:21, 1 Տիմ. 3:1-13, և 1 Հովհ. 4:1-6)
   Ճիշտ գնահատելու մի քանի չափանիշներ կարող են օգտակար լինել՝
   ա. գնահատումը պետք է լինի հաստատելու նպատակով (տես՝ 1 Հովհ. 4:1՝ «փորձեք» արդարացնելու միտումով, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՈՐՁԵԼ (*Peirazō and Dokimazō*):
   բ. գնահատումը պետք է կատարվի խոնարհությամբ և հեզությամբ (տես՝ Գաղ. 6:1)
   գ. գնահատումը չպետք է կենտրոնանա անձնական նախասիրության խնդիրների վրա (տես՝ Հռոմ. 14:1-23, 1 Կորնթ. 8:1-13, 10:23-33)
   դ. գնահատումը պետք է բացահայտի այն առաջնորդներին, ովքեր եկեղեցու կամ համայնքի ներսում «քննադատության մասնակից չեն լինում» (տես՝ 1 Տիմոթեոս 3):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱԹՈՌԸ
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՏԻԺ